

Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2020թ. դեկտեմբերի 25-ի թիվ 234-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ
ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս	3-4 էջ
2. Ասփոփագիր	5-6 էջ
3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ	6-7 էջ
4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները	7-8 էջ
5. Անհամադասասնականությունների վերաբերյալ գրառումներ	8-25 էջ
6. Հաշվեքննությանը արձանագրված աձև փաստեր	26-27 էջ
7. Հեճճսկողական գործնածագ	28 էջ
8. Առաքարկոութոններ էջ	28-29

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի օգոստոսի 7-ի թիվ 135-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:
Հաշվեքննության առարկան	Մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն որոշում, ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 15-ի թիվ 163-Ն որոշում, ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 730-Ն որոշում, ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշում, ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշում, ՀՀ ֆինանսների նախարարի մարտի 13-ի թիվ 254-Ն հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հունիսի 1-ի 69-Ա/1 հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հունիսի 30-ի թիվ 79-Ա հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունիսի 13-ի թիվ 751-Ն հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի

նախարարի 2014 թվականի հուլիսի 30-ի 79-Ա հրաման
և կանոնակարգող այլ նորմատիվ իրավական ակտեր:

**Հաշվեքննությունն
ընդգրկող
ժամանակաշրջանը** 2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հունիսի 30-ը
ներառյալ:

**Հաշվեքննության
կատարման
ժամկետը** 2020թ. օգոստոսի 17-ից մինչև 2020թ. հոկտեմբերի 31-ը
ներառյալ: ՀՀ հաշվեքննիչ պալատի 30.09.2020թ. թիվ
168-Ա որոշմամբ հաշվեքննությունը կասեցվել է, իսկ
20.11.2020թ. թիվ 171-Ա որոշմամբ՝ վերսկսվել:

**Հաշվեքննության
մեթոդաբանությունը** Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ
պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի
ֆինանսական և համապատասխանության
հաշվեքննության գործող մեթոդաբանությունների
համաձայն:
Իրականացվել է ֆինանսական և համապատասխանությ-
յան հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են
զննում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական
ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում** Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ
պալատի առաջին վարչության կողմից, որի
աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ
պալատի անդամ Կարեն Կարապետյանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

2.1 Մի շարք դեպքերում նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված առաջին կիսամյակի Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում չի արտացոլվել որոշ միջոցառումների մասով առաջին կիսամյակի տարբեր ամիսներին կատարված աշխատանքների վերաբերյալ հայտերի /կատարողականների/ գումարները: Այսինքն, ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված որոշ միջոցառումների մասով Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերի ցուցանիշը չի համապատասխանում առաջին կիսամյակում փաստացի կատարված ծավալներին: Մասնավորապես. թվով 19 դեպքում ընդամենը 154,028,69 հազ. դրամի չափով աշխատանքներ/ծառայություններ է կատարված առաջին կիսամյակի տարբեր ամիսներին և սահմանված ժամանակահատվածի ընթացքում հայտ /կատարողական/ է ներկայացված նախարարություն, մինչդեռ դրանք չեն ներառվել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված առաջին կիսամյակի Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում: Ընդ որում, այս պարագայում նույն չափով էլ կառաջանար կրեդիտորական պարտավորություններ: Միևնույն ժամանակ 1-ին եռամսյակում արձանագրվել էր թվով 18 ծրագրային միջոցառումներ՝ 86,641.88 հազ. դրամի կատարողականների չափով, որոնք չէին ընդգրկվել առաջին եռամսյակի համապատասխան ծրագրերի Ձև-2 հաշվետվությունների փաստացի ծախսերի ցուցանիշներում: Սակայն 1-ին կիսամյակում, առաջին եռամսյակի 18 ծրագրային միջոցառումների փոխարեն, առկա է 19-ը՝ 1-ով ավելի, իսկ արժեքային արտահայտությամբ՝ 67,386.81 հազ. դրամ-ով ավելի:

Նշվածներից 3 դեպքերում առկա են նույնիսկ մի քանի ամսվա փաստացի կատարված աշխատանքներ, որոնք չեն ընդգրկվել Ձև-2 հաշվետվությունների փաստացի ծախսերի ցուցանիշներում:

Այսպիսով, առկա է անհամապատասխանություն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի և ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի «օրինակելի ձև Հ-2 լրացման պահանջներ» մասի 9-րդ կետով, «Ընդհանուր դրույթներ» մասի 2-րդ կետի 3-րդ ենթակետով, «Հաշվետվությունների կազմն ու բովանդակությունը» մասի 5-րդ և «Հաշվետվությունների ամփոփումն ու ներկայացումը» մասի 14-րդ կետերով սահմանված պահանջների հետ:

2.2 Միևնույն ժամանակ դրա հետ կապված «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին»

հաշվետվություններում չի ներառվել առաջին կիսամյակի տարբեր ամիսներին գոյացած կրեդիտորական պարտքերը՝ նույն 154,028,69 հազ. դրամի չափով:

2.3 Վերլուծելով փաստացի ծախսերի և հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը արձանագրվեց, որ մի շարք ծրագրային միջոցառումների դեպքերում առկա է նաև գերակատարումներ: Ընդ որում կատարողականների ցուցանիշները որպես կանոն հաշվարկվում են հիմք ընդունելով դրամարկղային ծախսի ցուցանիշը: Սակայն եթե հաշվի առնենք փաստացի ծախսի ցուցանիշը, որը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում փաստացի կատարված աշխատանքները, ապա փաստացի ծախսի և ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը կարտահայտի հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների փաստացի կատարողականը: Մասնավորապես թվով 4 ծրագրային միջոցառումների դեպքում առկա է ճշտված պլանի նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված փաստացի ծախսերի գերակատարում:

2.4 Թվով 9 ծրագրային միջոցառումների դեպքում՝ ընդհանուր 96,461.1 հազ. դրամ ճշտված պլանով առկա է կիսամյակային պլանավորում, սակայն դրամարկղային ծախսի կատարողականը կազմել է 0%:

3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ՀՊԵ-ԿԿ-81 առ 31-ը հուլիսի 2020 թվականի գրությամբ հաշվեքննության շրջանակներում պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում, որը համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի պետք է ներկայացվեր 30-օրյա ժամկետում, սակայն այն ՀՀ հաշվեքննիչ պալատ մուտք է եղել 08.09.2020թ.-ին: Ուսումնասիրելով ներկայացված տեղեկատվությունը պարզվել է, որ այն ամբողջական չէ, քանի որ բացակայել են բազմաթիվ անհրաժեշտ տվյալներ: Հաշվեքննություն իրականացնող պաշտոնատար անձինք, օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային /LSFINANCE և LSREP/ համակարգերի շտեմարաններից, ինչպես նաև հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից կարողացել են ստանալ բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Վերը նշվածը, ինչպես նաև ՀՀ տարածքում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված հանգամանքները, զգալի դժվարություններ են առաջացրել հաշվեքննությունն ըստ ծրագրերի և միջոցառումների կատարման ռիսկերի ամբողջական և համակողմանի գնահատման գործընթացում: Հաշվի առնելով այդ հանգամանքը, 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների հաշվեքննության իրականացման համար որպես ռիսկային խնդիր է դիտարկվել՝ նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականի թերակատարումների և բյուջեի կատարողականի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացրած հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալները մասնակի ընդգրկելու, իսկ որոշ դեպքերում առհասարակ չներառելու խնդիրները:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, իսկ հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն ու հաշվեքննության առարկային վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականի բյուջեի ծախսերի տարեկան պլանը կազմել է 31,339,021.1 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը կազմել է 19,855,325.7 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 11,483,695.4 հազ. դրամի չափով նվազեցում: Նվազեցումը հիմնականում պայմանավորված է «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 ծրագրով նախատեսված 10,430,507.5 հազ. դրամ գումարը բյուջետային համապատասխան մարմիններին բաշխմամբ:

Առաջին կիսամյակի պլանը կազմել է 14,356,732.3 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 9,828,433.6 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 4,528,298.7 հազ. դրամի

նվազեցում 31.5%-ի չափով: Նվազեցումը հիմնականում պայմանավորված է «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 ծրագրով նախատեսված 4,424,790.0 հազ. դրամ գումարից 4,346,674.5 հազ. դրամը բյուջետային համապատասխան մարմիններին բաշխմամբ, արդյունքում նշված ծրագրով ճշտված պլանը կազմել է 78,115.5 հազ. դրամ: Կատարվել է նաև ավելացումներ, օրինակ «18 տարեկանից բարձր տարիքի անձանց համայնքային փոքր տներում խնամքի կազմակերպման համար անշարժ գույքի ձեռքբերում» 1032-31001 ծրագրով տարեկան պլանավորում չի իրականացվել, սակայն տարեկան ճշտված պլանով այն կազմել է 21,246.4 հազ. դրամ, որն ամբողջությամբ ընդգրկվել է կիսամյակի ճշտված պլանում:

Դրամարկղային ծախսը կազմել է 5,359,606.4 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմում է 4,468,827.2 հազ. դրամ, կատարման տոկոսը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ կազմում է 54.5 տոկոս: Փաստացի ծախսը կազմել է 6,535,446.9 հազ. դրամ, դրամարկղային ծախսի նկատմամբ տարբերությունը կազմում է 1,175,840.5 հազ. դրամ, փաստացի կատարման տոկոսը հաշվի առնելով փաստացի ծախսը /կատարողականը/ ճշտված պլանի նկատմամբ կկազմի 66.0 տոկոս:

Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները ըստ ծրագրերի և միջոցառումների ներկայացվում է կից հավելվածով՝ բյուջետային ծրագրերի աղյուսակի տեսքով, որտեղ ներկայացված է նաև անհամապատասխանության վերաբերյալ գրառումները:

5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Վերլուծվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների կատարման վերաբերյալ տվյալները: Արդյունքում արձանագրվել է, որ ծրագրային միջոցառումների ճնշող մեծամասնությունում դրամարկղային ծախսի մասով առկա է ճշտված պլանի

նկատմամբ թերակատարումներ: Դրանց գերակշռող մասում թերակատարումները առկա է նաև փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով: Միննույն ժամանակ փաստացի ծախսի մասով ճշտված պլանի նկատմամբ որոշ դեպքերում առկա է նաև գերակատարումներ: Հիմնականում որպես թերակատարման պատճառ նշվել է ՀՀ տարածքում համավարակի /COVID-19/ հետևանքով առաջացած դժվարությունները, կիսամյակում շահառուների թվաքանակի պակաս լինելը, որոշ ծախսային հոդվածներով փաստացի պակաս ծախս կատարելու, գնման ընթացակարգերի (մրցույթների) պլանավորված ժամանակին չկայանալու կամ չամփոփվելու և համապատասխան պայմանագրերը ուշ կնքելու, ինչպես նաև որոշ դեպքերում հայտերը /կատարողականները/ կիսամյակի ավարտից հետո՝ սահմանված ժամկետում չներկայացնելու հանգամանքը: Սակայն հարկ է նշել, որ մի շարք դեպքերում նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված առաջին կիսամյակի Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում չի արտացոլվել որոշ միջոցառումների մասով առաջին կիսամյակի տարբեր ամիսներին կատարված աշխատանքների վերաբերյալ հայտերի /կատարողականների/ գումարները, ինչը որևէ ձևով չի կարող հիմնավորվել վերը նշված պատճառաբանություններով: Այսինքն, ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված որոշ միջոցառումների մասով Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերի ցուցանիշը չի համապատասխանում առաջին կիսամյակում փաստացի կատարված աշխատանքներին: Մասնավորապես. թվով 19 դեպքում ներքոհիշյալ ծրագրերի մասով, ընդամենը 154,028,69 հազ. դրամի չափով, աշխատանքներ է կատարված առաջին կիսամյակի տարբեր ամիսներին և սահմանված ժամանակահատվածի ընթացքում հայտ /կատարողական/ է ներկայացված նախարարություն, մինչդեռ դրանք չեն ներառվել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված առաջին կիսամյակի Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում: Ընդ որում, այս պարագայում նույն չափով էլ կառաջանար կրեդիտորական պարտավորություններ: Այսպես՝

1. 1088-12006 ծր. /Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում/՝ 57,059.6 հազ. դրամ,
2. 1088-12009 ծր. /Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց, երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում/՝ 34,659.97 հազ. դրամ,
3. 1088-12010 ծր. /Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում/՝ 7,838.81 հազ. դրամ,

4. 1088-12011 ծր. /Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում/ 27,157.55 հազ. դրամ,

5. 1102-11004 ծր. /Կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման աշխատանքներ/ 5,041.6 հազ. դրամ,

6. 1032-11002 ծր. /Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ/ 1,568.38.0 հազ.դրամ,

7. 1032-11009 ծր. /Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ/ 1,362.4 հազ. դրամ,

8. 1141-11018 ծր. /Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում/ 3,833.36 հազ. դրամ,

9. 1141-11015 ծր. /Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ/ 555.0 հազ. դրամ,

10. 1141-11016 ծր. /Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ/ 322.3 հազ. դրամ,

11. 1160-11007 ծր. /Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում/ 598.0 հազ. դրամ,

12. 1160-11009 ծր. /Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում/ 998.5 հազ. դրամ,

13. 1110-12001 ծր. /Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում/ 510.0 հազ. դրամ,

14. 1088-12002 ծր. /Աշխատաշուկ. անմրցունակ ազատազրկ վայրերից վերադարձած, հաշմ. ունեցող, ինչպես նաև «հաշմ. ունեցող երեխա» կարգ. ունեցող անձանց աշխատ. տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհ. և հաշմ. ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում/ 1,069.27 հազ. դրամ,

15. 1088-12003 ծր. /Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում/ 2,044.0 հազ. դրամ,

16. 1088-12004 ծր. /Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում/ 8,367.95 հազ. դրամ,

17. 1117-11003 ծր. /Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում/ 51,6 հազ. դրամ,

18. 1141--11002 ծր. /ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու

ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ/՝ 572.1 հազ.դրամ,

19. 1160--11008 ծր. /Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում/՝ 418.3 հազ.դրամ:

Միևնույն ժամանակ 1-ին եռամսյակում արձանագրվել էր թվով 18 ծրագրային միջոցառումներ՝ 86,641.88 հազ. դրամի կատարողականների չափով, որոնք չէին ընդգրկվել առաջին եռամսյակի համապատասխան ծրագրերի Ձև-2 հաշվետվությունների փաստացի ծախսերի ցուցանիշներում: Սակայն 1-ին կիսամյակում, առաջին եռամսյակի 18 ծրագրային միջոցառումների փոխարեն, առկա է 19-ը՝ 1-ով ավելի, իսկ արժեքային արտահայտությամբ՝ 67,386.81 հազ. դրամ-ով ավելի: Նշվածներից 3 դեպքերում առկա են նույնիսկ մի քանի ամսվա փաստացի կատարված աշխատանքներ, որոնք չեն ընդգրկվել Ձև-2 հաշվետվությունների փաստացի ծախսերի ցուցանիշներում: Սյապես,

1. 1102-11004 ծր. /Կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման աշխատանքներ/՝ 5,041.6 հազ. դրամ, հունվար-հունիս ամիսների շարունակաբար ներկայացվող թվով 6 հայտ- պահանջագրեր չի ընդգրկվել հաշվետվություններում և չի ֆինանսավորվել:

2. 1153-11001 ծր. /Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում/՝ 8,210.9 հազ. դրամ, մարտ-հունիս ամիսների շարունակաբար ներկայացվող թվով 4 հայտ- պահանջագրեր չի ընդգրկվել հաշվետվություններում և չի ֆինանսավորվել:

3. 1110-12001 ծր. /Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում/՝ 510.0 հազ. դրամ փետրվար-հունիս ամիսների համար ներկայացվել է միասնակ 1 հայտ-պահանջագիր և այն չի ընդգրկվել հաշվետվություններում և չի ֆինանսավորվել:

Հարկ է նշել, որ ՀՀ ֆինանսների նախարարության 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի «օրինակելի ձև Հ-2 լրացման պահանջներ» մասի 9-րդ կետի համաձայն «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» աղյուսակի «ԺԱ» /փաստացի ծախս/ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները, հաշվարկված աշխատավարձի ու կրթաթոշակների գծով կատարված ծախսերը:

Միևնույն ժամանակ ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի՝

- «Ընդհանուր դրույթներ» մասի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն
«Հաշվետու ժամանակահատված է համարվում տվյալ ֆինանսական տարվա

այն ժամանակահատվածը, որի ընթացքում իրականացված գործառույթների վերաբերյալ կամ որի ավարտի դրությամբ ներկայացվում է հաշվետվությունը»:

- «Հաշվետվությունների կազմն ու բովանդակությունը» մասի 5-րդ կետի համաձայն «Հաշվետվության թվային մասն արտացոլում է հաշվետու ժամանակահատվածի ավարտի դրությամբ, տվյալ ժամանակահատվածի կտրվածքով, համապատասխան բյուջեների կատարման, ինչպես նաև հիմնարկների ֆինանսական գործունեության վերաբերյալ թվային ցուցանիշները»:
- «Հաշվետվությունների ամփոփումն ու ներկայացումը» մասի 14-րդ կետի համաձայն «Տարաժամկետ հաշվետվությունները ներկայացվում են շաբաթական, ամսական, եռամսյակային և (կամ) տարեկան պարբերականությամբ, և դրանցում արտացոլվում է հաշվետու մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածի ընթացքում իրականացված որոշակի գործառույթների կամ վերջինիս տրամադրության տակ գտնվող որոշակի ակտիվների և (կամ) պարտավորությունների շարժի մասին տեղեկատվությունը»:

Համաձայն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի «Պետական մարմնի գլխավոր ֆինանսիստը, սահմանված կարգով պետական հիմնարկներից ստանալով հաշվետվությունները, ամփոփում է դրանք և լիազոր մարմնի սահմանած կարգով ներկայացնում է վերջինիս:

Պետական հիմնարկներից ստացված հաշվետվություններից բացի, գլխավոր ֆինանսիստն ապահովում է նաև պետական մարմնի կողմից իրականացվող միջոցառումների և ծրագրերի կատարման մասին հաշվետվությունների ամփոփումը և լիազոր մարմին ներկայացնելը:

Գլխավոր ֆինանսիստը հաշվետվության հետ միասին լիազոր մարմին է ներկայացնում նաև հաշվետվության մանրամասն վերլուծությունը՝ ծրագրի համեմատ շեղումների պատճառների բացահայտմամբ:

Այսպիսով, առկա է անհամապատասխանություն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի և ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի վերը նշված կետերով սահմանված պահանջների հետ, ինչը հիմք է տալիս արձանագրելու, որ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում «իրականացված գործառույթները», «ակտիվների և շարժի մասին տեղեկատվությունը», «համապատասխան բյուջեների կատարման, ինչպես նաև հիմնարկների ֆինանսական գործունեության վերաբերյալ թվային

ցուցանիշները», մասնավորապես առաջին կիսամյակի տարբեր ամիսներին կատարված աշխատանքներ թվով 19 միջոցառումների մասով 154,028,69 հազ. դրամի չափով, ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 254-Ն հրամանով սահմանված «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ձև Հ-2 հաշվետվություններում չի ներառվել: Միևնույն ժամանակ դրա հետ կապված «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» հաշվետվություններում չի ներառվել առաջին կիսամյակի տարբեր ամիսներին գոյացած կրեդիտորական պարտքերը՝ նույն 154,028,69 հազ. դրամի չափով:

Անհամապատասխանության վերաբերյալ գրառումները ներկայացվում է կից հավելվածով՝ բյուջետային ծրագրերի աղյուսակի տեսքով: Միևնույն ժամանակ ստորև ներկայացվում է վերոնշյալ անհամապատասխանությունների վերաբերյալ արձանագրվածի էությունը բնորոշող օրինակներ:

Մասնավորապես.

- Ծրագիր 1088-12009, <<Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց, երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում>>- Հաշվետվություն ձև 2-ում 1 կիսամյակի դրամարկղային և փաստացի ծախսերը համընկնում են՝ 162,222.5 հազ. դրամ: Կրեդիտորական պարտքը՝ 0: 1-ին կիսամյակի կատարման %-ը 1-ին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 49.2 %, ընդ որում 1-ի եռամսյակի կատարման %-ը կազմել է 60.7 %, կատարման տեմպը հաշվի առնելով և դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը նվազել է 11.5 %-ով /49.2-60.7/: Միևնույն ժամանակ համաձայն գործակալության տեղեկատվության 06.07.2020թ. ներկայացվել է հունիս ամսվա համար 34,659.97 հազ. դր. կատարողականի հայտ պահանջագիր, որը չի ընդգրկվել հաշվետվություն ձև 2-ում: Արդյունքում հաշվետվություն ձև 2-ում արտացոլված ցուցանիշները

չի արտացոլում 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների իրական պատկերը:

Տարեկան նախատեսվել է 600

շահառու, 1 կիսամյակում նախատեսվել է սպասարկել 420 շահառու, փաստացի շահառուների թիվը կազմել է 370: 1 եռամսյակում շահառուների փաստացի թիվը կազմել է 195:

- Ծրագիր 1088-12010, << Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում>>- Հաշվետվություն ձև 2-ում 1 կիսամյակի դրամարկղային և փաստացի ծախսերը համընկնում են՝ 14,788.6 հազ. դրամ: Կրեդիտորական պարտքը՝ 0: 1-ին կիսամյակի կատարման %-ը 1-ին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 19.1 %, ընդ որում 1-ի եռամսյակի կատարման %-ը կազմել է 42. %, , կատարման տեմպը հաշվի առնելով և դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը նվազել է 22.9 %-ով /19.1-42/:

Միևնույն ժամանակ համաձայն

գործակալության տեղեկատվության 06.07.2020թ. ներկայացվել է հունիս ամսվա համար 7,838.81 հազ. դր. կատարողականի հայտ պահանջագիր, որը չի ընդգրկվել հաշվետվություն ձև 2-ում: Արդյունքում հաշվետվություն ձև 2-ում արտացոլված ցուցանիշները չի արտացոլում 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների իրական պատկերը:

Տարեկան

նախատեսվել է 200 շահառու, 1 կիսամյակում նախատեսվել է սպասարկել 120 շահառու, փաստացի շահառուների թիվը կազմել է 89: 1 եռամսյակում շահառուների փաստացի թիվը կազմել է 47:

- Ծրագիր 1160-11007, << Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում>>- 2020թ.-ի 1-ին կիսամյակի համար պլանավորվել է 12,049.9հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի դրամարկղային ծախսը կազմել 8,266.0 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 12,320.6 հազ. դրամ: Համաձայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև Հ-4-ի

- կրեդիտորական պարտքը կազմել է 4,054.0 հազ. դրամ: Շահառուների ընդհանուր թիվը 3 և 6 ամիսների համար ամսական պլանը համաձայն արդյունքային ցուցանիշների՝ կազմել է – 120 շահառու, փաստացի միջին թիվը՝ 3 ամիսների համար՝ 117 շահառու, 6 ամիսների համար՝ 113 շահառու: Դրամաշնորհի մրցույթը իրականացվել է 07.11.2019թ.-ին, որի արդյունքում 30.01.2020թ.-ին կնքել են թվով 3 պայմանագրեր՝ <<Երևան իմ սեր>> հիմնադրամի, <<Հույսի Մեծամոր>> և <<Լիարժեք կյանք>> Հ/Կ-ների հետ: Ծրագրով նախատեսվել է աջակցություն տրամադրել 120 շահառուի ամսական կտրվածքով /<<Երևան իմ սեր>> հիմնադրամի կողմից՝ 30, <<Լիարժեք կյանք>> Հ/Կ-ի կողմից՝ 60, <<Հույսի Մեծամոր>> Հ/Կ-ի կողմից՝ 30/: Փաստացի ծախսի մեջ չի ներառվել հաշվետու ժամանակահատվածում կատարված հունիս ամսվա աշխատանքները 598,0 հազ. դրամի չափով: Արդյունքում՝ հաշվետվության ծախսի գումարը չի արտացոլվում 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների իրական պատկերում: Արդյունքում՝ հաշվետվության ծախսի գումարը չի արտացոլվում 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների իրական պատկերում: Հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը 1-ին կիսամյակում՝ ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 102,2 %/ $12,320.6 / 12,049.9 * 100$ /, : ընդ որում փաստացի ծախսի ցուցանիշի կատարման %-ը 1-ին եռամսյակի համար՝ , կազմել է 67,4 %-ը, կատարման տեմպը ավելացել է 34,8 %-ով / $102.2 - 67.4$ /: Հիմք ընդունելով դրամարկղային ծախսը 1-ին կիսամյակի կատարման %-ը 1-ին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 68.6%, ընդ որում 1-ի եռամսյակի կատարման %-ը կազմել էր 67,4 %, կատարման տեմպը ավելացել է 1,2 %-ով:
- Ծրագիր 1032-11005, << Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ>>- 2020թ.-ի 1-ին կիսամյակի համար պլանավորվել է 26,846.8, հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի դրամարկղային ծախսը կազմել 24,904.9 հազ. դրամ, փաստացի

ծախսը կազմել է 29,904.9 հազ. դրամ, համաձայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև Հ-4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 5,000.0 հազ. դրամ : Շահառուների ընդհանուր թիվը 3 և 6 ամիսների ամսական պլանը համաձայն արդյունքային ցուցանիշների՝ կազմել է – 100 , փաստացի միջին թիվը՝ 3 ամիսների համար 100, 6 ամիսների համար՝ 100:

Հունվար ամսին «Հանս Քրիստիան Կոֆոեդ» Բ/Հ/ հետ կնքվել է պայմանագիր մեկ ամսվա համար, իսկ փետրվար-մարտ ամիսներին հաղթել է մրցույթում 3 լոտով՝ 30 , 30 , 40 անձի հանար: 10.02.2020թ կնքվել է պայմանագիր 3 լոտի համար/ 11 ամիսների համար(53,954,4 հազ. դրամ) , իսկ հունվար ամսվա համար ՀՀ կառավարության 27.02.2020թ. թիվ 225-Ն որոշմամբ (4,904.9 հազ. դրամ) - /պայմանագիրը կնքվել է 10.03.2020թ / : Փաստացի թվի և հաշվետու ժամանակահատվածի պլանավորված թվի՝ 3,058.1 հազ. դրամի տարբերությունը, ոչ լիարժեք պլանավորման արդյունք է:

Սույն միջոցառման գծով թերակատարում չի եղել /Պլ.100 մարդ –Փաստ՝ 100/: Հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը 1-ին կիսամյակում՝ ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 111,4 %, /29,904.9/26,846.8*100/, ընդ որում փաստացի ծախսի ցուցանիշի կատարման %-ը 1-ին եռամսյակի համար կազմել է 122.-%-ը, կատարման տեմպը նվազել է 10.6 %-ով /111.4 - 122/:

Հիմք ընդունելով դրամարկղային ծախսը 1-ին կիսամյակի կատարման %-ը 1-ին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 92.8 %, ընդ որում 1-ի եռամսյակի կատարման %-ը կազմել էր 81,6 %, կատարման տեմպը ավելացել է 11,2 %-ով:

- Ծրագիր 1110-12001, << Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում>>- Ծրագիրը իրականացվում է Սոց.նախ. 6 կազ.-ում:

Այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը սահմանվել է 36 ամիս:

2020թ. 1-ին կիսամյակի համար պլանավորվել է 5,832.0 հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի դրամարկղային ծախսը կազմել է 3,922.7 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 4,643.16 հազ. դրամ: Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև Հ-4-ի՝ կրեդիտորական պարտքը կազմել է 720.46 հազ. դրամ: Հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը՝ առաջին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ՝ կատարողականը կկազմի 79.6 % $/4,643.16/5,832.0 \cdot 100/$, ընդ որում 1-ին եռամսյակի համար հաշվետվություն ձև 2-ում նշված փաստացի ծախսի կատարման %-ը 1-ին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 83.7%, կատարման տեմպը նվազել է 4.1%-ով (79.6-83.7): Հիմք ընդունելով դրամարկղային ծախսը՝ 1-ին կիսամյակի կատարման %-ը 1-ին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 67.3%, ընդ որում 1-ին եռամսյակի կատարման % կազմել է 58.9%, կատարման տեմպը ավելացել է 8.4%-ով: 2020 թ. 1-ին եռամսյակի շահառուների փաստացի միջին թիվը կազմել է՝ 21 մարդ: 6-ամիսների համար շահառուների պլանային միջին թիվը նախատեսվել է 21 մարդ, իսկ փաստացի միջին թիվը կազմել է 20 մարդ: Փաստացի ծախսի մեջ չի ներառվել հաշվետու ժամանակահատվածում փետրվար- հունիս ամիսների կատարողականը՝ 510,0 հազ. դրամի չափով: Արդյունքում՝ հաշվետվության ծախսի գումարը չի արտացոլվում առաջին կիսամյակում կատարված աշխատանքների իրական պատկերում: Խախտվել է ՀՀ Ֆինանսների նախարարի 2019թ.-ի թիվ 254-Ն հրամանաի հավելված 2-ի ,Լրացման պահանջներ՝ օրինակելի ձև-Հ-2-ի, 9 կետի պահանջը՝ այն է, Աղյուսակի «ԺԱ» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը,

ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները, հաշվարկված աշխատավարձի ու կրթաթոշակների գծով կատարված ծախսերը:

- Ծրագիր 1011-11002, << Համայնքային ենթակայության սոցիալական ծառայությունների կողմից սոցիալական աջակցության քաղաքականության իրականացման ապահովում>>- 2020թ. 1-ին կիսամյակի համար ՍԱՏԿ- ների պահպանման ծախսերը պլանավորվել է 226,917.9 հազ.դրամ : Համաձայն հաշվետվություն ձև-2-ի դրամարկղային ծախսը կազմել է 226,917.9 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 268,938.0 հազ. դրամ: Համաձայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև Հ-4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 42,020.1 հազ. դրամ: Հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը՝ 1-ին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 118.5 % /268,938.0/226,917.9*100/, ընդ որում 1-ին եռամսյակի համար հաշվետվություն ձև 2-ում նշված փաստացի ծախսի կատարման %-ը 1-ին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 141.7%, կատարման տեմպը նվազել է 23.2%-ով (118.5-141.7): Հիմք ընդունելով դրամարկղային ծախսի 1-ին կիսամյակի կատարման %-ը 1-ին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 100.0%, ընդ որում 1-ին եռամսյակի կատարման % կազմել է 28.2%, կատարման տեմպը ավելացել է 71.8%-ով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առաջին կիսամյակի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով ծախսերի ցուցանիշները և դրանց յուրաքանչյուրի մասով կատարողականների վերաբերյալ ամբողջական տվյալները և անհամապատասխանությունների վերաբերյալ նկատառումները ներկայացված է կից ներկայացվող թիվ 1 հավելվածով:

**Հաշվեքննության օբյեկտի ներկայացրած պարզաբանումները
(առարկություններն ու բացատրությունները) և դրանց վերաբերյալ
հաշվեքննողների արձագանքը**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 16.12.2020թ. ՄԱ/66336-20 գրությամբ ներկայացվել է պարզաբանում <<<ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության վերաբերյալ>>:

Թիվ 1. «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառման (1015-12001) մասով՝

«Հաշվեքննողի կողմից ճշտված տվյալներ» սյունակում նշված 2020 թվականի 1-ին եռամսյակի համար ճշտված պլանի նկատմամբ 109.4 տոկոս հաշվարկի վերաբերյալ հարկ է նշել, որ 2020 թվականի 3 ամիսների հաշվարկով առկա է փաստացի 72.7 % ցուցանիշ (109.4 % կատարողական ցուցանիշ ստանալը պայմանավորված է նրանով, որ նախարարության երեք ամիսների համար կատարած փոխանցումները հարաբերվել է ոչ թե երեք ամիսների պլանավորված գումարին, այլ՝ երկու):

Մասնավորապես, սոցփաթեթի ծրագրով 1-ին եռամսյակի համար նախարարության 2604 շահառուի մասով պլանավորված 31,246.1 հազ. դրամը ընդամենը 2 ամսվա (հունվար-փետրվար) փոխանցումների համար է, չնայած նրան, որ ներկայացված է «եռամսյակ» անվանմամբ սյունակում: Առաջին եռամսյակի համար 2 ամսվա հաշվարկով փոխանցումների գումար ներկայացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ սոցիալական փաթեթի հատկացման կարգով սոցիալական փաթեթի գումարների հերթական (ամենամսյա) փոխանցումներն իրականացվում են մինչև հաջորդ ամսվա 5-րդ աշխատանքային օրը, այսինքն՝ մարտ ամսվա փոխանցումները կատարվելու են մինչև ապրիլի 7-ը, որն արդեն ընկնում է երկրորդ եռամսյակի կամ կիսամյակի մեջ (Կառավարության 27.12.2012 N 1691-Ն որոշման 1-ին հավելվածի 8-րդ կետ):

Հետևաբար, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համար 1-ին եռամսյակի (հունվար-փետրվար ամիսներ) մասով նախատեսված 31,246.1 հազ. դրամը եթե բաժանենք համապատասխան ամիսների թվի՝ 2-ի վրա, կստանանք, որ սոցփաթեթի գծով ամսական կտրվածքով նախարարության համար նախատեսված է շուրջ 15,623.05 հազ. դրամ: Այսինքն, երեք ամիսների համար նախարարության 2604 շահառուի գծով պլանավորված է շուրջ 46,869.15 հազ. դրամ, որից փաստացի երեք ամիսներին ծախսվել է 34,196.0 հազ. դրամը

(ցուցանիշը ներկայացված է նաև ՀՀ հաշվեքննիչ պալատի 30.07.20 N 116-Ա որոշմամբ հաստատված եզրակացության մեջ) կամ պլանավորվածի 72.7 %-ը :

Վերը նշվածը վերաբերելի է նաև 70,746.25 հազ. դրամ կիսամյակի ցուցանիշին: Մասնավորապես՝ կիսամյակի համար պլանավորված 78,115.2 հազ. դրամը պլանավորված է 5 ամիսների համար (հունվար-մայիս), որից փաստացի 5 ամիսների կտրվածքով ծախսվել է 51,833.7 հազ. դրամ (66.4 %): Ներկայացված 70,746.25 հազ. դրամը հավանաբար պարունակում է նաև հունիս ամսվա փոխանցումները, որը պլանավորված է ոչ թե կիսամյակի գումարի մեջ, այլ ինն ամիսների գումարի մեջ (այսինքն՝ 3-րդ եռամսյակի գումարում) և փաստացի ևս փոխանցվում է հուլիս ամսին (այսինքն՝ 3-րդ եռամսյակի ընթացքում):

Մասնավորապես՝ եթե վերը նշված նույն տրամաբանությամբ փորձենք հաշվարկել նաև նախարարության 6 ամիսների համար կատարված փոխանցումների կատարողական ցուցանիշը, ապա 6 ամիսների համար պլանավորված 93,738.3 հազ. դրամի (ամսական 15,623.05 հազար դրամը բազմապատկելով 6-ով) նկատմամբ 6 ամիսների 70,746.25 հազ. դրամ փաստացի ցուցանիշի (ներկայացված է ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից) կատարողականը կկազմի 75.5 %:

Հարկ է նշել նաև, որ վերը նշված շեղումները դրամարկղային ծախսի և փաստացի ծախսի միջև տարեվերջում շտկվում են, քանի որ կրեդիտորական պարտքերը մարվում են և դրանք հավասարվում են իրար:

Հաշվեքննողների արձագանքը թիվ 1-ի վերաբերյալ

Ձի ընդունվել: Հաշվեքննության արձանագրության՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թ. առաջին կիսամյակի ծախսերի կատարողականների վերաբերյալ 1-ին հավելվածի՝ 1015-12001 «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառման գծով «Հաշվեքննողի կողմից ճշտված տվյալներ» սյունակում նշվել է, որ հաշվի առնելով Ձև 2 հաշվետվության փաստացի գումարը՝ առաջին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 109,4 %, իսկ հաշվի առնելով առաջին կիսամյակի Ձև 2 հաշվետվության փաստացի գումարը՝ առաջին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 90,6 %: Նշված ցուցանիշը հաշվարկվել է նախարարության կողմից կազմված և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված առաջին եռամսյակի և առաջին կիսամյակի Ձև 2 հաշվետվությունների մեջ և փաստացի կատարողականների %-ը հաշվարկվել է հիմք ընդունելով արդեն իսկ հաշվետվություններով արտացոլված ցուցանիշները: Պարզաբանման մեջ նշվում է, որ առաջին եռամսյակի ճշտված պլանի մեջ ընդգրկվել է երկու ամիսների ցուցանիշը, իսկ վեց ամիսների ճշտված պլանի մեջ՝ հինգ ամիսների ցուցանիշը, որը ակնհայտ է, որ եռամսյակի կամ վեց

ամիսների ժամանակաշրջաններին վերաբերող հաշվետվություններում չի կարող այլ կերպ մեկնաբանվել, քան որպես երեք ամիսների կամ վեց ամիսների համար կատարված պլանավորում: Դրան վերաբերող դրամարկղային և փաստացի ծախսերը նույնպես համապատասխանաբար վերաբերելի են երեք և վեց ամիսներին: Ընդ որում առաջին եռամսյակի և առաջին կիսամյակի ձև-2 հաշվետվություններում դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը պարունակում է ճիշտ երեք ամիսների և վեց ամիսների ցուցանիշները: Արդյունքում ստացվում է, որ նախարարության կողմից կազմված և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված առաջին եռամսյակի և առաջին կիսամյակի ձև-2 հաշվետվություններում առկա է անհամադրելի ցուցանիշներ՝ ճշտված պլանի ցուցանիշները վերաբերվում են համապատասխանաբար երկու և հինգ ամիսներին, իսկ դրամարկղային և փաստացի ծախսերը՝ համապատասխանաբար երեք և վեց ամիսներին: Միևնույն ժամանակ անհասկանալի է, թե որ իրավական ակտով է սահմանված եռամսյա պլանի մեջ ընդգրկել երկու ամիսների ցուցանիշները կամ վեց ամիսների ճշտված պլանում ընդգրկել՝ հինգ ամսվա ցուցանիշները: Պարզաբանումների մեջ դա հիմնավորվում է այն հանգամանքով, որ առաջին եռամսյակի երրորդ ամսի՝ մարտ ամսվա վճարումները կատարվում է հաջորդ ամսին՝ ապրիլ ամսին, որը արդեն կընդգրկվի վեց ամսվա հաշվետվությունում, կամ առաջին կիսամյակի վերջին ամսի՝ հունիս ամսվա վճարումները կատարվում է հաջորդ ամսին՝ հուլիս ամսին, որը արդեն կընդգրկվի երրորդ եռամսյակի մեջ: Նշված մեկնաբանությունները այդ մասով անհիմն են, քանի որ բոլոր ծրագրերի դեպքում, այդ թվում նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող ծրագրերի դեպքում, բացառությամբ միանվագ վճարների, վճարումները հայտ-պահանջագրերի հիման վրա իրականացվում է հաշվետու ժամանակաշրջանի ավարտի հաջորդ ամսվա ընթացքում և պլանավորումն էլ իրականացվում է հաշվետու ժամակաշրջաններին վերաբերող բոլոր ամիսների համար:

Առաջարկություն- Առաջարկվում է նախարարությանը քննարկել 1015-12001 «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառման գծով երեք, վեց ամիսների մասով ճշտված պլաններ սահմանելիս երկու կամ հինգ ամիսներին վերաբերող ցուցանիշներ սահմանելու հստակ իրավական հիմքերը:

Թիվ 2. «Հաշվեքննողի կողմից ճշտված տվյալներ» սյունակում նշված «565» և «1900» շահառուների թվերն առաջարկում ենք փոխարինել «1728» և «1965» թվերով՝ հաշվի առնելով, որ 51,833.7 հազ. դրամը փոխանցվել է 1728 շահառուի համար (այդ ցուցանիշն է ներկայացվել նաև L. S. Finance էլ. համակարգով), ոչ թե

565, իսկ 6 ամսվա փաստացի՝ 70,746.25 հազ. դրամը բաժանելով 36 հազ. դրամի (յուրաքանչյուր շահառուին մեկ ամսվա համար փոխանցվում է 6 հազ. դրամ) կստանանք 1965 շահառու՝ 1900 շահառուի փոխարեն:

Հաշվեքննողների արձագանքը թիվ 2-ի վերաբերյալ.

Ընդունվել է, հաշվի է առնվել:

Թիվ 3. Զբաղվածության ծրագրերի մասով՝ 1088-12002, 2-րդ կետը՝ 1088-12003, 3-րդ կետը՝ 1088-12004, հավելված 1-ի՝ 7-րդ կետի 1088-11004, 8-րդ կետի 1088-11006, 9-րդ կետի 1088-11007, 10-րդ կետ 1088-12001, 11-րդ կետի՝ 1088-12013, հավելված 2-ի 13-րդ կետի 1088-11001, 14-րդ կետի 1088-11002 ծրագրերով հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ոչ մի հայտ (կատարողական) չի ներկայացվում, ինչպես նշված է գրության մեջ, հաշվետվությունները ներկայացվում են հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո՝ սահմանված ժամկետներում:

Համաձայն ՀՀՀՀՍ-ի՝ հաշվետու ժամանանակաշրջանը այն ժամանանակահատվածն է, որին վերաբերում է հաշվետվությունը և սահմանափակվում հաշվետու ժամանակահատվածում կազմված փաստաթղթերով:

Այն զբաղվածության ծրագրերը, որոնցով շահառուներին վճարվում է աշխատավարձ, կրթաթոշակ, օժանդակություն և այլն (1088 ծրագրի միջոցառումներ-12001, 12002, 12003, 12004, 12006, 12008, 12009, 12010, 12011, 12013), ամիսն ավարտվելուց հետո, հաջորդ ամսվա մեջ, հիմնվելով հաճախելիության թերթիկների և մշտադիտարկման արդյունքներից, տարածքային կենտրոնների կողմից կազմվում և ՀՊԳ է ներկայացվում ֆինանսավորման հայտ: Հունիս ամսվա համար հայտերը ստացվում են հուլիս ամսվա մեջ, օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, ուստի չեն կարող արտացոլվել հունիս ամսվա փաստացի ծախսերում, այլ ներառվում են հուլիս ամսվա ծախսերում:/ ՀՀՀՀՀՀՍ 2.44 կետ1/

Համաձայն ՀՀՀՀՍ 2.44 կետ 1.3; 2.36; 2.45; 2.47 կետ 3.4, ինչպես նաև 254-Ն հրամանի՝ ամրագրված է նույն գաղափարը, այն է, որ ֆինանսական հաշվետվությունների մեջ ներառվում են այն փաստացի ծախսերը, որոնք հաշվետու ժամանակահատվածում /01.01.2020-31.06.2020/, հաստատված են ծախսը հիմնավորող փաստաթղթերով, այսինքն ճանաչված են և արժանահավատորեն չափված:

Զբաղվածության գործակալության համար ծրագրերի իրականացման փաստացի ծախսը հիմնավորող միակ փաստաթուղթ է հանդիսանում հայտ-պահանջագիրը, որը կազմվում, ստորագրվում և ներկայացվում է Գործակալություն հաջորդ ժամանակաշրջանում, 30.06.2020թ. հետո (համաձայն 534-Ն որոշման հայտ-պահանջագիրը տարածքային կենտրոնները կազմում են ամսվան հաջորդող

ամսվա 1-5 օրերում): Հետևաբար, ՀՊԳ փաստացի ծախսերի չափումը իրականացնում է հաջորդ ամսում, եռամսյակում և ներկայացնում հաշվետվության մեջ համապատասխանաբար, բացառությամբ միանվագ վճարների:

Սակայն կազմված եզրակացության համաձայն, գործակալությունը պետք է ներառի իր հաշվետվության մեջ այն փաստացի ծախսերը, որոնց հիմնավորող փաստաթղթերը դեռևս չեն էլ կազմվել, ծախսի չափը հայտնի չէ, ինչը անթույլատրելի է:

Հաշվեքննողների արձագանքը Թիվ 3-ի վերաբերյալ

Չի ընդունվել: Պարզաբանման մեջ առկա են արտահայտություններ, որոնք հստակ վիճարկելի են: Մասնավորապես, ընդունելի չէ զբաղվածության մի շարք ծրագրային միջոցառումների դեպքում ձև 2 հաշվետվություններում փաստացի ծախսի ցուցանիշները թերի արտացոլելու վերաբերյալ արձանագրված փաստերն առարկելու նախարարության կողմից նշված փաստարկները, այն է <<Հունիս ամսվա համար հայտերը ստացվում են հուլիս ամսվա մեջ, օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, ուստի չեն կարող արտացոլվել հունիս ամսվա փաստացի ծախսերում, այլ ներառվում են հուլիս ամսվա ծախսերում:/ ՀՀՀՀՀՀՀՍ 2.44 կետ1/: Զբաղվածության գործակալության համար ծրագրերի իրականացման փաստացի ծախսը հիմնավորող միակ փաստաթուղթ է հանդիսանում հայտ-պահանջագիրը, որը կազմվում, ստորագրվում և ներկայացվում է Գործակալություն հաջորդ ժամանակաշրջանում, 30.06.2020թ. հետո (համաձայն 534-Ն որոշման հայտ-պահանջագիրը տարածքային կենտրոնները կազմում են ամսվան հաջորդող ամսվա 1-5 օրերում): Հետևաբար, ՀՊԳ փաստացի ծախսերի չափումը իրականացնում է հաջորդ ամսում, եռամսյակում և ներկայացնում հաշվետվության մեջ համապատասխանաբար, բացառությամբ միանվագ վճարների>>:

Հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն բոլոր ծրագրային միջոցառումների մասով /բացի զբաղվածության ծրագրերի մասով/ ձև 2 հաշվետվությունները կազմելիս փաստացի ծախսերում ընդգրկում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարված ծախսերը, չնայած հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա հայտ-պահանջագրերը ներկայացվում են ՀՀ օրենսդրության համաձայն հաշվետու ժամանակաշրջանի հաջորդող ամսում՝ սահմանված ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, որոնք արձանագրվել են որպես անհամապատասխանություններ: Ընդ որում ձև 2 հաշվետվությունը կազմվում և ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվում հաշվետու ժամանակաշրջանի հաջորդող ամսի 20-ին: Իսկ զբաղվածության ծրագրերի մասով հաշվետու ժամանակաշրջանում փաստացի կատարված աշխատանքները, որի

հայտ-պահանջագրերը ներկայացվել է հաջորդող ամսվա 1-5 օրերում, վերը նշված հիմնավորումներով հաշվետու ժամանակաշրջանի ձև 2 հաշվետվությունների փաստացի ծախսերում չի ներառվել: Ակնհայտ է, որ հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքը՝ փաստացի ծախսը հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 1-5 օրերին հայտ-պահանջագիր ներկայացնելիս, այն պետք է ընդգրկվի նախարարության կողմից հաշվետու ժամանակաշրջանի համար կազմվող ձև 2 հաշվետվությունում, որը ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվում հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ին:

Նշենք, որ խոսքը վերաբերվում է ոչ թե դրամարկղային ծախսին, որը հաշվետվությունում ներառվում է հաշվետու ժամանակահատվածում վճարված գումարներին, այլ հաշվետու ժամանակահատվածում /հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսներ/ կատարված աշխատանքներին, որոնց վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածներում կատարված աշխատանքների վերաբերյալ ոչ ուշ քան հուլիս ամսվա սահմանված ժամանակահատվածում ներկայացվել է հայտ-պահանջագրեր, սակայն դրանք չեն ներառվել հաշվետու ժամանակաշրջանի համար կազմված և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված Ձև 2 հաշվետվություններում:

Միևնույն ժամանակ ընդունելով ներկայացված արտահայտությունը, այն է՝ <<<<<<Ս 2.44 կետ 1.3; 2.36; 2.45; 2.47 կետ 3.4, ինչպես նաև 254-Ն հրամանի՝ ամրագրված է նույն գաղափարը, այն է, որ ֆինանսական հաշվետվությունների մեջ ներառվում են այն փաստացի ծախսերը, որոնք հաշվետու ժամանակահատվածում /01.01.2020-31.06.2020/, հաստատված են ծախսը հիմնավորող փաստաթղթերով, այսինքն ճանաչված են և արժանահավատորեն չափված,>> նշենք, որ ծախսերի չճանաչման վերաբերյալ մեր կողմից նշված ծրագրային միջոցառումների մասով որևէ կոնկրետ դեպք չի ներկայացվել: Հետևաբար նշված պատճառաբանությունը, առանց որևէ կոնկրետության, հիմք չի կարող հանդիսանալ նշված մեկնաբանությունն ընդունելու:

Առաջարկություն- Առաջարկվում է նախարարությանը քննարկել ֆինանսական հաշվետվության ձև 2-ի փաստացի ծախսի սյունակի լրացման նախարարության և նախարարության ենթակայության Զբաղվածության գործակալության մոտեցումների տարբերությունների հանգամանքները, առավելապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում հաշվեքննության իրականացման առաջին եռամսյակի ընթացիք եզրակացությունում նշված խնդիրները՝ հատկապես զբաղվածության գործակալության մասով, հանգամանալից ներկայացվել էր:

Թիվ 4. «1160-11007 - Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում» միջոցառման վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված դիտարկումների մեջ նշվում է, որ «Պայմանագրերով նախատեսվել է յուրաքանչյուրը պետք է սպասարկեն 30-ական շահառուներ», սակայն պետք է հստակեցնել, որ ծրագրով նախատեսված է աջակցություն տրամադրել 120 շահառուի ամսական կտրվածքով («Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից՝ 30, «Լիարժեք կյանք» ՀԿ-ի կողմից՝ 60, «Հույսի Մեծամոր» ՀԿ-ի կողմից՝ 30):

Հաշվեքննողների արձագանքը Թիվ 4.-ի վերաբերյալ

Հաշվի է առնվել և կատարվել է ճշտում:

Թիվ 5. «1141-11015 - Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ» միջոցառման վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված դիտարկումների մեջ նշվում է, որ «Թվով 2 ապաստարանների համար նախատեսվել է 60 շահառու, 30-ական յուրաքանչյուրի համար», սակայն պետք է հստակեցնել, որ ծրագրով նախատեսված է աջակցություն տրամադրել 60 շահառուի ոչ թե ամսական, այլ տարեկան կտրվածքով:

Հաշվեքննողների արձագանքը Թիվ 5.-ի վերաբերյալ

Հաշվի է առնվել և կատարվել է ճշտում:

Թիվ 6. «1141-11016 - Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ» միջոցառման վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված դիտարկումների մեջ նշվում է, որ «Շահառուների թիվը համաձայն արդյունքային ցուցանիշների հաշվետու ժամանակահատվածի համար ամսական նախատեսվել է 1800», սակայն պետք է փաստենք, որ ծրագրով նախատեսված է աջակցություն տրամադրել 1800 շահառուի ոչ թե ամսական, այլ տարեկան կտրվածքով:

Հաշվեքննողների արձագանքը Թիվ 6.-ի վերաբերյալ

Հաշվի է առնվել և կատարվել է ճշտում:

6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Վերլուծելով փաստացի ծախսերի և հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը պարզվեց, որ մի շարք ծրագրային միջոցառումների դեպքերում առկա է նաև գերակատարումներ: Ընդ որում կատարողականների ցուցանիշները որպես կանոն հաշվարկվում են հիմք ընդունելով դրամարկղային ծախսի ցուցանիշը: Սակայն եթե հաշվի առնենք փաստացի ծախսի ցուցանիշը, որը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում փաստացի կատարված աշխատանքները, ապա փաստացի ծախսի և ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը կարտահայտի հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների փաստացի կատարողականը: Մասնավորապես թվով 4 ծրագրային միջոցառումների դեպքում առկա է ճշտված պլանի նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված փաստացի ծախսերի գերակատարում: Այսպես օրինակ.

1. 1032-11005 ծր./ Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ/ ճշտված պլանը կազմել է 26,846.8 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 29,904.9 հազ. դրամ, կատարողականը կկազմի 111.4 %:

2. 1160-11007 ծր. /Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում/ ճշտված պլանը կազմել է 12,049.9 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 12,320.6 հազ. դրամ, կատարողականը՝ 102.2%:

3. 1011-11002 ծր. /Համայնքային ենթակայության սոցիալական ծառայությունների կողմից սոցիալական աջակցության քաղաքականության իրականացման ապահովում/ ճշտված պլանը կազմել է 226,917.9 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 268,938.0 հազ. դրամ, կատարողականը կկազմի՝ 118.5%:

4. 1117-11004 ծր. /Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ/ ճշտված պլանը կազմել է 132,055.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 158,170.2 հազ. դրամ, կատարողականը կկազմի՝ 119.8%:

Թվով 9 ծրագրային միջոցառումների դեպքում՝ ընդհանուր 96,461.1 հազ. դրամ ճշտված պլանով առկա է կիսամյակային պլանավորում, սակայն դրամարկղային ծախսի կատարողականը 0% է եղել: Մասնավորապես,

